# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
## ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 սեպտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Մայիս Մխոյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի հունիսի 5-ի թիվ 543-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ6/0325/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 25-ի որոշումը,

**Պ Ա Ր Զ Ե Ց Ի**

**<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.**

1. Մայիս Մխոյանը 2023 թվականի օգոստոսի 1-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի հունիսի 5-ի թիվ 543-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

3. ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի օգոստոսի 31-ին:

**<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>**

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 21-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածին, 616-րդ հոդվածի 1-ին մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին, 53-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ՎԴ/4538/05/09 և 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/2659/05/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Դատարանն արձանագրում է, որ վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարներին առնչվող իրավահարաբերությունը չի կարող համարվել հանրային, քանի որ վարձակալության պայմանագրի կնքման շրջանակներում համայնքը հանդես է գալիս ոչ թե որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, ով իրացնում է հանրային իրավունքի նորմերով իրեն վերապահված լիազորություններն իր գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ որպես քաղաքացիական իրավահարաբերության մասնակից՝ հողամասի սեփականատեր: Հետևաբար՝ քննարկվող իրավահարաբերության բովանդակությունն է կազմում ոչ թե համայնքի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այլ համայնքի՝ որպես հողամասի սեփականատիրոջ՝ վարձակալության պայմանագրի կնքման եղանակով իր հողամասերը վարձակալության տալու և այդ հողամասերի վարձակալության գումարի գանձման*

*վերաբերյալ որոշում ընդունելու իրավունքը, այսինքն՝ այդ իրավահարաբերությունն ուղղված է համայնքի՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտի մասնավոր շահի իրացմանը: Ընդ որում, իրավահարաբերությունը կարգավորող նորմերն իրենց բնույթով մասնավոր իրավունքի նորմեր են և վարքագծի կանոններ են սահմանում մասնավոր իրավահարաբերության սուբյեկտների համար:*

*(...) Դատարանը եզրահանգում է, որ տվյալ վեճը չի բխում հանրային իրավահարաբերություններից, տվյալ դեպքում առկա են վարձատուի և վարձակալի միջև քաղաքացիաիրավական հարաբերություններ, հետևաբար գործն ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին»*[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասին, 87-րդ հոդվածին, 88-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերին, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 7-րդ մասին, 3-րդ հոդվածի 1-ին մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0823/05/14, ՎԴ/0830/05/14 և ՎԴ/1621/05/14, 2010 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ ՎԴ/4538/05/09, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/2659/05/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով հետևյալը. *«(...) Տվյալ դեպքում, վիճարկվող որոշման բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ այն կայացնելով՝ Տաշիր համայնքի ղեկավարը, անկախ որոշմամբ գանձման առաջադրված պարտավորության բնույթից, փաստացի իրականացրել է հանրային իրավական դրամական պահանջի կատարման իր իշխանական լիազորությունը: (...) Որոշման ուսումնասիրությունը վկայում է նաև, որ Մայիս Միսյանից պարտավորությունների գանձման համար հարուցվել է վարչական վարույթ, որի ընթացքում նշանակվել են վարչական լսումներ (նույն որոշման «ՀՀ Լոռու*

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 21-23:

*մարզի Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան» վերտառությամբ 1-ին կետում նշվում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում 2023 թվականի մայիսի 16-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հունիսի 05-ին հրավիրվել են վարչական լսումներ), որից հետո կայացվել է հանրային իրավական դրամական պահանջի գանձման վերաբերյալ վարչական ակտ: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ որոշման եզրափակիչ մասի 3-րդ կետով սահմանվել է, որ դրա պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում: Հատկանշական է նաև այն, որ վիճարկվող որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի համաձայն՝ այն կարող է բողոքարկվել վարչական կարգով Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ ՀՀ վարչական դատարան: Ինչ վերաբերում է վիճարկվող որոշմամբ վարձակալական իրավահարաբերություններ կարգավորող ՀՀ հողային օրենսգրքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերի վկայակոչմանը, ապա Դատարանը գտնում է, որ գործի ենթակայության որոշման փեսանկյունից այդ հանգամանքը չի կարող էական նշանակություն ունենալ: Դատարանի այդ դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վիճարկվող որոշումը կայացնելիս Տաշիր համայնքի ղեկավարը հանդես է եկել որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, քանի որ փաստացի իրականացրել է հանրային իրավական դրամական պահանջի կատարման իր իշխանական լիազորությունը:*

*Դատարանի գնահատմամբ վիճարկվող որոշմանը վերագրելի են վերոգրյալ բոլոր հատկանիշները: Այն անհատական իրավական ակտ է, քանի որ պարունակում է կոնկրետ անձի՝ Մայիս Միսյանին ուղղված կարգադրագիր, ընդունված է տեղական ինքնակառավարման մարմնի՝ համայնքի ղեկավարի կողմից, ունի արտաքին ներգործություն, քանի որ ակտի հասցեատերն այնպիսի ֆիզիկական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում Տաշիր համայնքի հետ, ընդունված է հանրային իրավունքի*

*բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, մասնավորապես՝ որոշմամբ լուծվող հարցը հանրային իրավական դրամական պահանջի կատարումն է: Այլ հարց է, որ վիճարկվող որոշմամբ Տաշիր համայնքի ղեկավարը որպես հանրային իրավական դրամական պահանջ գանձման է առաջադրել վարձակալության գումարներ, սակայն Դատարանը գտնում է, որ այդ հանգամանքը վարչական ակտի իրավաչափության գնահատման տիրույթում է, այլ ոչ թե գործի ենթակայության: Միաժամանակ, վարչական ակտի իրավաչափության գնահատման իրավասությունը վերապահված է հենց ՀՀ վարչական դատարանին: Դատարանը նաև արձանագրում է, որ վիճարկվող որոշումն ուղղակի իրավական հետևանքներ է առաջացրել Մայիս Միոյանի համար, քանի որ դրանով Մայիս Միոյանից գանձման է առաջադրվել 38.161.208 (երեսունութ միլիոն հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր ութ) ՀՀ դրամ գումար: Հետևաբար, վիճարկվող որոշումը վարչական ակտ է: Շարադրվածի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ առկա է իրավահարաբերությունը հանրային որակելու նաև երկրորդ պայմանը, այն է՝ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը: Անդրադառնալով իրավահարաբերությունը հանրային որակելու վերջին պայմանին՝ Դատարանն արձանագրում է, որ այն ևս առկա է, քանի որ վիճարկվող որոշումն ուղղված է հանրային իրավական դրամական պահանջի կատարման վերաբերյալ հարցի լուծմանը և այդպիսով ուղղված է հանրային շահի իրացմանը»*[2]:

**<u>Վճռաբեկ դատարանի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ6/0325/05/23 գործն ըստ հայցի՝ Մայիս Միոյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի հունիսի 5-ի թիվ 543-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 32-35:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (...)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նշված օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (...)»:*

Նույն օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *«Համայնքի ղեկավարը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները. (...) տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ»:*

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն»:*

Նույն օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ *«Հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (այսուհետ՝ դրամական պահանջներ)»:*

Նշված օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով»:*

8.1. Վկայակոչված նորմերից հետևում է, որ համայնքի ղեկավարի լիազորությունների մեջ է, ի թիվս այլնի, տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառումը, որը համայնքի ղեկավարն իրացնում է համապատասխան անհատական ակտի ընդունմամբ՝ հանրային իրավական դրամական պահանջ ներկայացնելու միջոցով: Ընդ որում, այն դեպքում, երբ այդ պահանջն առաջադրող վարչական ակտը դառնում է անբողոքարկելի, ենթակա է կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգին համապատասխան:

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»*[3]:

Վարչական ակտի հատկանիշներին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *«Էյ Քեյ Էյ Քի» ՍՊԸ-ի տնօրեն Արբեն Ղուլյանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի* վարչական գործով կայացված որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(…) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում արտահայտված իրավական դիրքորոշումները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է,*

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

*որ որպես վարչական ակտին բնորոշող հատկանիշներ անհրաժեշտ է դիտարկել հետևյալները.*

*1) վարչական ակտն անհատական իրավական ակտ է. այն պաշտոնական գրավոր փաստաթուղթ է (բացառությամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածով նախատեսված բանավոր և այլ ձևի վարչական ակտերի), որը չի պարունակում իրավական նորմեր և սահմանում է պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակիորեն անհատապես նշված կամ նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, այսինքն՝ ունի հստակորեն որոշված հասցեատեր,*

*2) վարչական ակտն ընդունվում է վարչական մարմինների՝ ՀՀ գործադիր իշխանության հանրապետական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև վարչարարություն իրականացնող այլ պետական մարմինների կողմից,*

*3) վարչական ակտն ունի արտաքին ներգործություն. նրա հասցեատերն այնպիսի ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, որը կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն ընդունած մարմնի հետ,*

*4) վարչական ակտն ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում. այն հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը հիմնված է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի վրա,*

*5) վարչական ակտն ընդունվում է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը,*

*6) վարչական ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ կամ ուղղված (միտված) է այդ հետևանքների առաջացմանը վարչական մարմնի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի*

*կապի մեջ չգտնվող համապատասխան ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար, դրանով վարչական մարմինը վերջիններիս համար սահմանում, փոփոխում, վերացնում կամ ճանաչում է իրավունքներ և պարտականություններ, ինչպես նաև նրանց պրամադրում է իրավունքներ կամ ստեղծում է այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման, կամ մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է նրանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը»*[4]:

10. Սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից և մեջբերված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը: Ընդ որում, իրավահարաբերությունը որպես հանրային որակելու համար, անհրաժեշտ է, առաջին հերթին, բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը:

11. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Մայիս Մխոյանը 2023 թվականի օգոստոսի 1-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի հունիսի 5-ի թիվ 543-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին[5],

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ-ի տնօրեն Արբեն Ղույումյանն ընդդեմ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի* վարչական գործով ՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ՎԴ/11082/05/20 որոշումը:

[5] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

- վերոնշյալ գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 10-ի որոշմամբ վերահասցեագրվել է ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ վարձակալության պայմանագրով սահմանված վարձավճարներին առնչվող իրավահարաբերությունը չի կարող համարվել հանրային, քանի որ վարձակալության պայմանագրի կնքման շրջանակներում համայնքը հանդես է գալիս ոչ թե որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված մարմին, որն իրացնում է հանրային իրավունքի նորմերով իրեն վերապահված լիազորություններն իր գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ որպես քաղաքացիական իրավահարաբերության մասնակից՝ հողամասի սեփականատեր[6],

- ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ նշելով, որ վիճարկվող որոշման բովանդակային վերլուծությունից բխում է, որ Տաշիր համայնքի ղեկավարը, անկախ որոշմամբ գանձման առաջադրված պարտավորության բնույթից, փաստացի իրականացրել է հանրային իրավական դրամական պահանջի կատարման իր իշխանական լիազորությունը[7]:

12. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-10-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում վիճարկվող որոշմամբ որոշվել է Մայիս Մխոյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 38.161.208 (երեսունութ միլիոն հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր ութ) ՀՀ դրամ գումար: Այսինքն՝ վիճարկվող որոշմամբ Տաշիր համայնքի ղեկավարի կողմից Մայիս Մխոյանին առաջադրվել են որոշակի պարտավորություններ, հետևաբար անդրադառնալով տվյալ որոշման՝ հանրային իրավունքի բնագավառում ընդունված լինելու հանգամանքին, հարկ է նախ գնահատման առարկա դարձնել, թե արդյոք դրա հասցեատերերի մոտ ծագել են հանրային իրավական հարաբերություններ, և արդյոք այն հանդիսանում է վարչական ակտ, թե՝ ոչ: Այսպես՝

---

[6] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

1) վիճարկվող ակտն անհատական իրավական ակտ է, քանի որ ունի հստակ հասցեատեր, որոշակի պարտականություն է սահմանում Մայիս Մխոյանի համար,

2) վիճարկվող ակտն ընդունվել է վարչական մարմնի՝ Տաշիր համայնքի ղեկավարի կողմից,

3) վիճարկվող ակտն ունի արտաքին ներգործություն, քանի որ այդ ակտի հասցեատերը՝ Մայիս Մխոյանը, կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում Տաշիր համայնքի ղեկավարի հետ,

4) վիճարկվող ակտն ընդունվել է հանրային իրավունքի բնագավառում, նկատի ունենալով, որ.

- տվյալ իրավահարաբերության սուբյեկտը տեղական ինքնակառավարման մարմինն է, մասնավորապես՝ Տաշիր համայնքի ղեկավարը, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է,

- տվյալ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ Տաշիր համայնքի ղեկավարի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այն է՝ խնդրո առարկա որոշմամբ, Տաշիր համայնքի ղեկավարն իրացրել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով վերջինիս վերապահված՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ կիրառելու լիազորությունը,

- տվյալ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), քանի որ այդ որոշումից հետևում է, որ այն Տաշիր համայնքի ղեկավարի կողմից, ըստ էության, դիտարկվել է որպես հանրային իրավական դրամական պահանջի կատարմանն ուղղված անհատական ակտ,

5) վիճարկվող ակտը հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ Տաշիր համայնքի ղեկավարի՝ Մայիս Մխոյանին ուղղված միակողմանի կարգադրություն է, որը կայացվել է ի սկզբանե հանրային իշխանությամբ օժտված մարմնի կողմից

իրագործվելու նպատակով ընդունված իրավական նորմերի, այն է՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ, 110-րդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 606-րդ, 616-րդ հոդվածների և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածների հիման վրա,

6) վիճարկվող ակտն ընդունվել է կոնկրետ գործի կարգավորման նպատակով. այն ուղղված է հանրային իշխանությամբ օժտված մարմնի՝ Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հանրային իրավունքի ոլորտում կոնկրետ անձին՝ Մայիս Մխոյանին առնչվող կոնկրետ հարցի կարգավորմանը, դրանով Մայիս Մխոյանին առաջադրվել է որոշակի պարտականություն,

7) վիճարկվող ակտն առաջացնում է ուղղակի իրավական հետևանքներ Տաշիր համայնքի ղեկավարի հետ կազմակերպական, աշխատանքային, ներքին ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չգտնվող անձի՝ Մայիս Մխոյանի համար, դրանով վարչական մարմինը սահմանել է որոշակի պարտականություններ վերջինիս համար:

13. Միաժամանակ հարկ է արձանագրել, որ ՀՀ վարչական դատարանի՝ գործը ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին վերահասցեագրելու վերաբերյալ 2023 թվականի օգոստոսի 10-ի որոշման հիմքում դրված դատողությունները վերաբերում են ոչ թե սույն գործի ենթակա էության հարցին, այլ ըստ էության՝ տվյալ գործով վիճարկվող վարչական ակտի իրավաչափությանը, որոնք կարող են գնահատման առարկա դառնալ գործն ըստ էության լուծող դատական ակտի շրջանակներում:

14. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ6/0325/05/23 գործն ըստ հայցի՝ Մայիս Մխոյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի հունիսի 5-ի թիվ 543-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

15. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Մայիս Մխոյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ6/0325/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

թիվ ՎԴ6/0325/05/23 գործն ըստ հայցի՝ Մայիս Մխոյանի ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի՝ 2023 թվականի հունիսի 5-ի թիվ 543-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

**ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**